

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/3

31 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Տաթվան» ՍՊԸ-ի բողոքը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի ժ/պ 26.06.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 288518 որոշման դեմ:

«Տաթվան» ՍՊԸ-ի բողոքում բերված փաստարկները.

«ՏԱԹՎԱՆ» ՍՊԸ-ն (Այսուհետ նաև՝ Ընկերություն) 2002 թ-ից առ այսօր զբաղվում է ավտոտրանսպորտային գործունեությամբ (ներքաղաքային ուղևորափոխադրումների իրականացում): Ընկերությունը բացի նշված գործունեությունից այլ գործունեություն չի իրականացնում:

17.02.2015թ.-ին Ընկերության կողմից շահագործումից հանվել (խոտանվել) է 2002 թ-ի արտադրության «Գազել» մակնիշի երկու միկրոավտոբուս՝ յուրաքանչյուրը հարյուր հազար ՀՀ դրամ արժողությամբ:

Համաձայն Մրցույթների անցկացման կարգը սահմանող թիվ 762 կառավարության որոշման՝ 10 տարի և ավելի վաղեմություն ունեցող ներքաղաքային ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները ենթակա են շահագործումից հանման (խոտանման): Նույն որոշման համաձայն միկրոավտոբուսային պարկը մեքենայի 10 տարին լրանալուց հետո ենթակա է պարտադիր թարմացման: Հետևաբար Ընկերությունը՝ հիմք ընդունելով մրցույթների անցկացման կարգը սահմանող կառավարության որոշման պահանջները, իրականացրել է միկրոավտոբուսների թարմացում՝ շահագործումից հանելով 2002 թ-ի արտադրության «Գազել» մակնիշի երկու միկրոավտոբուսները:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն հաստատագրված վճարի գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով՝ բացառությամբ նույն օրենքի 7-րդ հոդվածի «ժէ» ենթակետով նախատեսված գործունեության տեսակի, ինչպես նաև սահմանային չափը գերազանցելու դեպքում ԱԱՀ վճարող չհամարվողների համար ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 0 տոկոս:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողները:

Ընկերությունը հայտնում է, որ Նոր Նորքի ՀՏ կողմից հիշեցում չի կատարվել շրջանառության հարկի կամ ԱԱՀ-ի դաշտում գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

19.05.2015թ-ին Նոր Նորքի ՀՏ-ից ուղարկվել է N 461 արձանագրությունը՝ ԱԱՀ-ի հաշվարկի գծով ճշտված հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ:

Բողոքաբերը 23.05.2015թ.-ին ներկայացել է Նոր Նորքի ՀՏ, ստացել է ծանուցումը և նույն օրը հայտ ներկայացրել, որ եթե ընկերությունը, բացի իր հիմնական

գործունեությունից այլ գործունեություն ծավալի կհարկվի շրջանառության հարկով: Դրանից անմիջապես հետո իրավաբանական բաժնից վարչական իրավախախտման գործ է հարուցվել շրջանառության հարկի հաշվարկ չներկայացնելու համար:

Տվյալ դեպքում անհասկանալի է, եթե ընկերությունը ծանուցում չի ստացել շրջանառության հարկի և ԱԱՀ-ի գծով, ընդամենը խոտանել է ժամկետանց երկու մեքենա չնչին գումարով, գրություն է ստանում ԱԱՀ-ի հաշվարկի համար, բայց պետք է պատասխանատվություն կրի շրջանառության հարկի մասով:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է ազատել վարչական պատասխանատվությունից: Նշում է, որ ՍՊԸ-ն իր հասանելիք շրջանառության հարկի գումարը այլ գործնություն կատարելու դեպքում անպայման կվճարի:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Նոր Նորքի ՀՏ կողմից օրենքով սահմանված ժամկետում «Տաթվան» ՍՊԸ-ին չի ծանուցվել շրջանառության հարկի հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետի վերաբերյալ: Այսպես՝ Ընկերությունը պետք է ծանուցվեր մինչև 01.02.2015թ.-ը, որպեսզի ՀՀ օրենքով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացներ մինչև 20.02.2015թ.-ը: Տվյալ դեպքում Ընկերությունը ծանուցվել է միայն 08.06.2015թ.-ին: Նոր Նորքի ՀՏ-ն՝ հիմք ընդունելով ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկությունները 19.05.2015թ.-ին կազմել է կամերալ ուսումնասիրության արձանագրություն, համաձայն որի Ընկերությունը 17.02.2015թ.-ին վաճառել է երկու ավտոբուս՝ 100.000 դրամ արժողությամբ, սակայն Ընկերությունը չի ներկայացրել 2015թ.-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկ: Այնուհետև, 27.05.2015թ.-ին հարկ վճարողի կողմից ներկայացվել է շրջանառության հարկի հաշվարկ գույքի՝ տվյալ օտարման մասով: Դրանից հետո՝ հունիսի 8-ին, հարկ վճարողը ներկայացել է Նոր Նորքի ՀՏ՝ առձեռն ստացել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցումը և նույն օրը ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Վերոնշյալը հիմք ընդունելով՝ Նոր Նորքի ՀՏ պետի ժամանակավոր պաշտոնակատարը 26.06.2015թ.-ին ընդունել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 288518 որոշումը, համաձայն որի՝ Ընկերության տնօրենը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ.-ի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվետվությունը: Արարքը որակվել է որպես «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի խախտում և նշանակվել է տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ 21.06.2014 թ.-ի թիվ ՀՕ-128-Ն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1-ին կետով նախատեսված՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով

շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետը կիրառվում է միայն այն դեպքում, եթե հարկային մարմինը հարկ վճարողին ծանուցել է սույն օրենքով նման վերջնաժամկետ սահմանված լինելու մասին: Եթե հարկային մարմինը սույն մասով նախատեսված ծանուցումը հարկ վճարողին ուղարկում է սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված ժամկետներից հետո, ապա որպես շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետ սահմանվում է հարկ վճարողին ծանուցումը տրամադրելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը»:

Քննարկվող դեպքում, Նոր Նորքի ՀՏ կողմից վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետ սահմանված լինելու մասին Ընկերությանը չծանուցելու հանգամանքը, վերջինիս գրկել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու ՀՀ օրենսդրությամբ վերապահված իրավունքից: Այսինքն, նշված հայտարարությունը Ընկերության կողմից չի ներկայացվել իրենից անկախ հանգամանքների բերումով, կամ կարելի է փաստել, որ կատարվածում, ըստ էության, բացակայում է Ընկերության մեղքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության տնօրենին անհրաժեշտ է ազատել հարուցված վարչական վարույթի արդյունքում առաջադրված վարչական պատասխանատվությունից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի ժ/պ 26.06.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 288518 որոշումը բեկանել, իսկ գործը կարգել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ